

Ներդիր թերթիկ՝ տեղեկություններ պացիենտի համար ԲՐԵՎԻՊՐՈՍ™, 0,04 մգ/մլ, ակնակաթիլներ Տրավոպրոստ

Նրախան դեղն ընդունելն ամբողջությամբ կարողացեք ներդիր թերթիկը, քանի որ այն պարունակում է Ձեզ համար կարևոր տեղեկություններ:

- Պահպանեք ներդիր թերթիկը: Հնարավոր է, որ Դուք ցանկանաք ևս մեկ անգամ ընթերցել այն:
- Եթե Ձեզ մոտ ծագել են լրացուցիչ հարցեր, դիմեք բուժող բժշկին կամ դեղատան աշխատողին:
- Դեղը նշանակված է հենց Ձեզ համար: Մի փոխանցեք այն այլ մարդկանց: Այն կարող է վնասել նրանց, նույնիսկ եթե նրանց հիվանդության ախտանիշները համընկնում են Ձեր ախտանիշների հետ:
- Եթե Ձեզ մոտ առաջացել է որևէ անցանկալի ռեակցիա, ապա դիմեք բուժող բժշկին կամ դեղատան աշխատողին: Տվյալ ուղեցույցը տարածվում է ցանկացած հնարավոր անցանկալի ռեակցիայի վրա, այդ թվում՝ ներդիր թերթիկի 4-րդ բաժնում չթվարկվածների վրա:

ՆԵՐՎԻԲ ԹԵՐԹԻԿԻ ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Ինչ է ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղը և ինչի համար է այն օգտագործվում
- Ինչ պետք է խմանալ ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղը կիրառելուց առաջ
- ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղի կիրառումը
- Հնարավոր անցանկալի ռեակցիաները
- ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղի պահպանումը
- Փաթեթվածքի պարունակությունը և այլ տեղեկություններ

1. ԻՆՉ Է ԲՐԵՎԻՊՐՈՍ™ ԴԵՂԸ ԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ԱՅՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ

ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղը պարունակում է տրավոպրոստ ազդող նյութը, որը դասվում է պրոստագլանդինների շարքին: Տրավոպրոստն իջեցնում է ներակնային ճնշումը, կարող է օգտագործվել ինչպես առանձին, այնպես էլ ներակնային ճնշումն իջեցնող այլ ակնակաթիլների հետ համատեղ (օրինակ՝ բետա-պաշարիչներ): Դեղն օգտագործվում է ներակնային ճնշումն իջեցնելու համար:
- բացանկյուն գլաուկոմայով կամ բարձրացած ներակնային ճնշմամբ (ակնային հիպերտենզիա) չափահաս պացիենտների մոտ:
- ակնային հիպերտենզիա կամ մանկական տարիքի գլաուկոմա ունեցող 2 ամսականից մինչև 18 տարեկան երեխաների մոտ:

2. ԻՆՉ ԳԵՏՔ Է ԻՄԱՆԱԿԱԿՈՒՄ ԲՐԵՎԻՊՐՈՍ™ ԴԵՂԸ ԿԻՐԱՌՈՒՄԻՆՑ ԱՌԱՋ ՄԻ օգտագործեք ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղը, եթե Դուք ունեք գերզգայունություն ազդող նյութի կամ դեղի որևէ այլ բաղադրիչի նկատմամբ (տե՛ս 6-րդ բաժինը):

Հատուկ ցուցումներն ու նախազգուշական միջոցները

- ԲՐԵՎԻՊՐՈՍ™-ը կարող է ավելացնել Ձեր թարթիչների երկարությունը, հաստությունը, գունավորման ինտենսիվությունը և/կամ քանակը: Նկատվել են նաև աչքի կամ կոպերի շուրջ հյուսվածքների փոփոխություններ, այդ թվում՝ մազերի անստվորանք:
- ԲՐԵՎԻՊՐՈՍ™-ը կարող է փոխել Ձեր ծիածանաթաղանթի գույնը: Այդ փոփոխությունը կարող է մշտական լինել: Կարող է դիտվել նաև աչքերի շուրջ մաշկի գույնի փոփոխություն:
- Եթե Դուք տարել եք վիրահատություն կատարակտի կապակցությամբ, ապա խորհրդակցեք բժշկի հետ նախքան ԲՐԵՎԻՊՐՈՍ™ կիրառելը:
- Եթե Դուք ունեք կամ ունեցել եք աչքերի բորբոքում (ծածկանբորբ/ուլեիտ), ապա խորհրդակցեք բժշկի հետ նախքան ԲՐԵՎԻՊՐՈՍ™ կիրառելը:
- ԲՐԵՎԻՊՐՈՍ™-ը հազվագյուտ դեպքերում կարող է հարուցել հևոց, խզզոցներ կամ խորտացնել աթթմայի ախտանշանները: Եթե Ձեզ անհանգստացնում են Ձեր շնչառության փոփոխությունները, հնարավորինս շուտ տեղեկացրեք այդ մասին Ձեր բժշկին:
- ԲՐԵՎԻՊՐՈՍ™-ը կարող է ներծծվել մաշկի միջոցով: Մաշկային ծածկույթների հետ կապում դեպքում անհրաժեշտ է անմիջապես մաքրել մաշկը դեղից: Դա հատկապես կարևոր է եղիների կամ եղիության պլանավորող կանանց համար:
- Խուսափեք փափուկ հայտնային ռսպակների հետ կաթիլների շփումից:
- Հայտնային ռսպակներն անհրաժեշտ է հանել դեղն օգտագործելուց առաջ և նորից դնել կաթեթումից 15 րոպե անց:
- Դեղը պարունակում է պոլիօրսիլ 40 հիդրոգենացված գերչալի յուղ և պրոպիլենգլիկոլ, որոնք կարող են առաջացնել մաշկային ռեակցիաներ և գրգռվածություն:

Երեխաներ

ԲՐԵՎԻՊՐՈՍ™-ը կարող է կիրառվել 2 ամսականից մինչև 18 տարեկան երեխաների մոտ նույն դեղաչափով, ինչ չափահաս պացիենտների համար: Խորհուրդ չի տրվում դեղի օգտագործումը մինչև 2 ամսական երեխաների մոտ:

Այլ դեղեր և ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղը

Տեղեկացրեք Ձեր բժշկին կամ դեղատան աշխատողին, եթե Դուք ընդունում կամ վերցնում ընդունել եք այլ դեղեր:

Հղիությունը և կրծքով կերակրելը

Եթե Դուք հղի եք, կամ կարծում եք, որ հղիացել եք, կամ պլանավորում եք հղիանալ, ապա նախքան դեղը կիրառելը խորհրդակցեք Ձեր բժշկի կամ դեղատան աշխատողի հետ: Խորհուրդ չի տրվում ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղի կիրառումը հղիության ընթացքում: Դեղը կարող է անցնել կրծքի կաթի մեջ: Խորհուրդ չի տրվում ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղի կիրառումը կրծքով կերակրման շրջանում:
Որևէ դեղամիջոց ընդունելուց առաջ խորհրդակցեք բժշկի հետ:

Տրանսպորտային միջոցը կառավարելը և մեխանիզմների հետ աշխատելը

ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղն օգտագործելիս Ձեզ մոտ կարող են ծագել տեսողության ժամանակավոր մշուշոտություն կամ տեսողության այլ խանգարումներ: Մի կառավարեք տրանսպորտային միջոցներ կամ որևէ բարդ սարքավորում, որոնք պահանջում են տեսողության հստակություն, քանի դեռ ախտանիշները չեն վերացել:

3. ԲՐԵՎԻՊՐՈՍ™ ԴԵՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Տվյալ դեղը միշտ կիրառեք բուժող բժշկի ցուցումներին ամբողջությամբ կամ անպատասխան: Կասկածներ չառաջացնող դեպքում խորհրդակցեք բուժող բժշկի համընդհանուր աշխատողի հետ:
Դեղի ցուցվող դեղաչափը՝ 1-ական կաթիլ ախտահարված աչք(եր)ում, օրական մեկ անգամ՝ երեկոյան:
Կիրառեք ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղը միայն աչք(եր)ի մեջ կաթեթցնելու համար:

Դեղի կիրառման ժամանակ հետևեք ստորև նշված հրահանգներին՝

- Անմիջապես առաջին ընդունումից առաջ գրեք բացման ամսաթիվը սովորաբար չեղող տուփի վրա հատուկ դրա համար նախատեսված տեղում:
- Դեղը կիրառելուց առաջ վազեք ձեռքերը:
- Հանեք սրվակի կափարիչը:
- Չգուշությամբ գուլար թեքեք ետ: Մտորին կոպը գուշորեն ներքև քաշեք:
- Սրվակի ծայրը մոտեցրեք աչքին: Հնարավոր է դա ավելի հեշտ լինի անել հայելու առջև:
- Կաթեթիկով մի դիպչեք աչքերին, կոպերին, հարակից հատվածներին կամ այլ մասերին կաներին: Դա կարող է աղտոտել կաթիլները:
- Թեթևակի սեղմեք սրվակի պատերին, որպեսզի 1 կաթիլ կաթեթցնեք ստորին կոպի մեջ:
- Փակեք աչքերը: Դեպի քիչ խոռոչ և կոկորդ դեղի արտահոսքի նվազեցման համար մատով զգուշորեն սեղմեք աչքի ներքև անկյունը 1 րոպեից ոչ պակաս:
- Եթե Դուք ակնակաթիլներն օգտագործում եք երկու աչքերի համար, միևնույն գործողությունը կրկնեք մյուս աչքի համար:
- Կիրառումից անմիջապես հետո կափարիչով ամուր փակեք սրվակը:

Եթե կաթիլը չի ընկել աչքի մեջ, կրկին փորձեք:

Եթե Դուք նաև այլ ակնակաթիլներ եք օգտագործում, ապա կաթեթցումների միջև ընկած միջակայքը պետք է լինի 5 րոպեից ոչ պակաս:

Եթե Դուք կիրառել եք ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղը պետք եղածից ավելի

Լվացեք աչքը զով ջրով: Այլևս կաթիլներ մի կաթեթցրեք մինչև դեղի հաջորդ նախատեսված դեղաչափի կիրառման ժամը:

Եթե Դուք մոռացել եք կիրառել ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղը

Ընդունեք հաջորդ չափաբաժինն ըստ նշանակման սխեմայի: Մի ընդունեք դեղի կրկնակի դեղաչափ՝ բաց թողնված դեղաչափը փոխհատուցելու համար: Մի օգտագործեք ախտահարված աչք(եր)ում օրական մեկ կաթիլից ավելի:

Եթե Դուք դադարեցրել եք ԲՐԵՎԻՊՐՈՍ™ դեղի կիրառումը

Մի դադարեցրեք դեղի կիրառումը առանց բուժող բժշկի հետ խորհրդակցելու: Աչքում անվերահսկելի ճնշումը կարող է հանգեցնել

տեսողության կորստի:

Տվյալ դեղի կիրառման վերաբերյալ լրացուցիչ հարցերի առկայության դեպքում դիմեք բուժող բժշկին կամ դեղատան աշխատողին:

4. ՀՆՆԲԳՎՈՐ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՌԵՍԿԻՎՆԵՐԸ

Ինչպես բոլոր դեղամիջոցները, տվյալ դեղը կարող է առաջացնել անցանկալի ռեակցիաներ, սակայն դրանք առաջանում են ոչ բոլոր պացիենտների մոտ: Մովրոբար, Դուք կարող եք շարունակել դեղի օգտագործումը, եթե կողմնակի ազդեցությունները լուրջ չեն: Եթե Դուք անհանգստանում եք, դիմեք բժշկի կամ դեղատան աշխատողի: Մի դադարեցրեք դեղի ընդունումն առանց բժշկի հետ խորհրդակցելու:

Տրավոպրոստ պարունակող դեղերի կիրառման ժամանակ դիտվել են հետևյալ անցանկալի ռեակցիաները:

Ճատ հաճախ հանդիպող անցանկալի ռեակցիաներ (կարող են առաջանալ ավելի, քան 10-ից 1 մարդու մոտ).

Աչքի խանգարումներ՝ աչքի հիպերեմիա (կարմրություն):

Հաճախ հանդիպող անցանկալի ռեակցիաներ (կարող են առաջանալ ոչ ավելի, քան 10-ից 1 մարդու մոտ).

Աչքի խանգարումներ՝ ծիածանաթաղանթի հիպերպիգմենտացիա, ցավ աչքում, անհարմարության զգացողություն աչքում, աչքերի չորություն, քոր և գրգռվածություն:

Ոչ հաճախ հանդիպող անցանկալի ռեակցիաներ (կարող են առաջանալ ոչ ավելի, քան 100-ից 1 մարդու մոտ).

Աչքի խանգարումներ՝ եղջերաթաղանթի էրոզիա, ծիածանաբորբ, ուլցերիտ, աչքի առաջային խցի բորբոքում, եղջերենաբորբ (կերատիտ), կետային եղջերենաբորբ, լուսավախություն, արտադրություն աչքերից, կոպերի բորբոքում, կոպերի կարմրություն և քոր, աչքերի շուրջ այտուցվածություն, ոչ հստակ տեսողություն, տեսողության սրության անկում, արցունքահոսություն, շաղկապենու բորբոքում (շաղկապենաբորբ՝ կոնյունկտիվիտ), կոպերի արտաշրջում, կատարակտ, կոպերի եզրերի կեղևակալում, թարթիչների ան: Այլ խանգարումներ՝ պերիպիթիզիտի ուժեղացում, գլխացավ, սրտխփոցի զգացողություն, հազ, քթի փակվածություն, կոկորդի գրգռվածություն, աչքերի շուրջ մաշկի հիպերպիգմենտացիա, մաշկի մզացում, մաշկի գունաթափում, մազերի կազմվածքի փոփոխություն, մազերի չափից ավելի ան (հիպերտրիխոզ):

Հազվագյուտ հանդիպող անցանկալի ռեակցիաներ (կարող են առաջանալ ոչ ավելի, քան 1000-ից 1 մարդու մոտ).

Աչքի խանգարումներ՝ կայծեր և փայլատակումներ աչքերի առջև (ֆոտոպսիա), կոպերի էկզեմա, թարթիչների ոչ ճիշտ ան (տրիխիազ), շաղկապենու այտուց, շաղկապենային քշտիկներ, լուսարձակող լուսապսակներ և ճառագայթներ լույսի աղբյուրի շուրջ (հայր էֆեկտ), աչքերի վիրուսային վարակ (հերպես), աչքերի զգայունություն նվազում, մեյրոմիա, իրիդոցիկլիտ, աչքի առաջային խցի պիգմենտացիա, բրի լայնացում (միդրիազ), թարթիչների գույնի փոփոխություն, թարթիչների հաստացում, աչքերի հոգնածություն (սաթեմոպիա): Այլ խանգարումներ՝ գլխացավ, համի զգացողության խանգարում (դիսգևզիա), սրտի ռիթմի խանգարում, սրտի կծկումների հաճախականություն նվազում, բարձրացած կամ իջած զարկերակային ճնշում, հևոց, սաթմա, պերզիկ քթաբորբ, չորություն քթում, ցավ ըմպանում, ձայնի փոփոխություն, պեպտիկ խոցի սրացում, աղետամոքային խանգարումներ, փորկապություն, չորություն բերանում, մաշկի կարմրություն, մաշկաբորբ (պերզիկ կամ կոնտակտային), ցան, մազերի գույնի փոփոխություն, թարթիչների կորուստ, հոդացավ, ոսկրամկանային ցավ, ընդհանուր թուլություն (սաթեմիա):

Հաճախականությունը հայտնի չէ (եյնելով առկա տվյալներից՝ առաջացման հաճախականությունը որոշել հնարավոր չէ).

Աչքի խանգարումներ՝ մակուլյար այտուց, կոպերի ակոսիկի խորացում: Այլ խանգարումներ՝ առաքկանների պտավելու/ֆոտալու զգացողություն (վերաիգո), դեպրեսիա, անհանգստություն, անքնություն, ականջներում աղմուկ, ցավ իր ծքավանդակում, սրտային ռիթմի խանգարում, հաճախ սրտություն, դանդաղարտություն, ասթմայի սրացում, արյունահոսություն քթից, փորյուծություն, ցավ որովայնում, սրտխառնոց, փսխում, քոր, մազերի տարօրինակ (անոմալ) ան, ցավոտ միզարձակում, անմիզապահություն, շագանակագեղձային սպեցիֆիկ հակածնի մակարդակի բարձրացում:

Անցանկալի ռեակցիաների մասին հաղորդելը

Եթե Ձեզ մոտ առաջանում է որևէ անցանկալի ռեակցիա, ապա խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղատան աշխատողի հետ: Տվյալ ուղեցույցը տարածվում է ցանկացած հնարավոր անցանկալի ռեակցիայի վրա, այդ թվում՝ ներդիր թերթիկում չբավարկվածների վրա: Անցանկալի ռեակցիաների մասին Դուք կարող եք նաև հաղորդել անմիջապես Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հաղորդակցության համակարգի միջոցով:

Հայաստանի Հանրապետություն
«Լիկվոր» ՓԲԸ,
0089, Երևան, Քոչինյան 7/9
Հեռ.՝ (374 93) 47 74 68, (374 15) 37 88 03
Էլ. փոստ՝ a.bazeyan@liqvor.com

5. ԲԵՐՎԻՊՐՈՍՏ™ ԴԵՂԻ ՊԼԶՊԼՆՈՒՄԸ

Պահպանեք 30°C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում: Պահպանեք երեխաների համար անհասանելի վայրում:

Մի օգտագործեք դեղը սրվակի և տուփի վրա «պիտանի է մինչև»-ից հետո նշված պիտանիության ժամկետը (պահպանման ժամկետը) լրանալուց հետո: Պիտանիության ժամկետի լրանալու ամսաթիվը փաթեթավածքի վրա նշված ամսվա վերջին օրն է:

Տվյալ դեղը պահպանման հատուկ պայմաններ չի պահանջում: Առաջին անգամ բացելուց հետո սրվակի պարունակությունն օգտագործեք 3 ամսվա ընթացքում: Նետք սրվակը առաջին բացումից 3 ամիս հետո՝ վարակումը կանխելու համար, և կիրառեք նոր սրվակ: Գրի առեք բացման ամսաթիվը տուփի վրա նշված տեղում:

Դեղերը մի նետեք (մի թափեք) կոյուղու (ջրմուղի) մեջ: Ճշտեք դեղատան աշխատողից՝ ինչպես ազատվել այն դեղերից, որոնք այլևս պետք չեն: Այդ միջոցները թույլ կտան պաշտպանել շրջակա միջավայրը:

6. ՓԱԹԵԹՎԱԾԵՐ ՊԱՐՈՒՄԸ ԿԱՌԵՐՈՒՄԸ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեղի յուրաքանչյուր միլիլիտր պարունակում է 0,04 մգ ակտիվ նյութ տրավոպրոստ: Օժանդակ նյութեր՝ բորբոքի, մանիտոլ, պրոպիլենգլիկոլ, նատրիումի քլորիդ, պոլիօքսիլի 40 հիդրոգենացված գերչակի յուղ, նատրիումի հիդրօքսիդ և/կամ քլորաջրածնական թթու (pH-ի ճշգրտման համար), ներարկման ջուր:

ԲԵՐՎԻՊՐՈՍՏ™ դեղի արտաքին տեսքը և փաթեթավածքի պարունակությունը

ԲԵՐՎԻՊՐՈՍՏ™ սկնակաթիլներ դեղը անգույնից մինչև թեթև դեղնավուն գույնի թափանցիկ լուծույթ է: Դեղի 5-ական միլիլիտր՝ պոլիէթիլենային սրվակի մեջ սիլիկոնե փակնետով և պտուտակային կափարիչով ու առաջին բացման ստուգիչով: Յուրաքանչյուր սրվակ բժշկական կիրառման հրահանգի (ներդիր թերթիկ) հետ միասին տեղադրված է ստվարաթղթե տուփի մեջ:

Գրանցման հավաստագրի իրավատերը

«Լիկվոր» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետություն, 0089, Երևան, Քոչինյան 7/9:

Արտադրող «Լիկվոր» ՓԲԸ, Հայաստան, 0089, Երևան, Քոչինյան 7/9
LIQVOR® Հեռ.՝ +37460 37 88 00
pharmaceuticals Էլ. փոստ՝ info@liqvor.com

Դեղի վերաբերյալ ցանկացած տեղեկություն ստանալու, ինչպես նաև բողոքների առկայության դեպքում պետք է դիմել գրանցման հավաստագրի իրավատիրոջ ներկայացուցչին կամ գրանցման հավաստագրի իրավատիրոջը:

Հայաստանի Հանրապետություն
0089, Երևան, Քոչինյան 7/9
Հեռ.՝ (37460) 37 88 00
Էլ. փոստ՝ info@liqvor.com